

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՍՏՈՆԵՐՈՐԳ ՏԱՐԻ. ԵՐԵՎԱՆԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, ԽԻԻ 22. ԱՍԻՄԻՂՋ ԽԻԻ 143

The Haik,

A Journal devoted to Armenia, Armenians, and Oriental Peoples.

Edited by M. S. GABRIEL, M. D.
at 341 West 23rd St., New York

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ապագայի հուշակութիւն. Թէ՛քեր պիտի կործանի Թուրքիա ն. — ՀԱՅՔը 1898 թուականին — Նամակ Ե. Պոլսին. — Վիճակագիրք Ամերիկայի հայոց. Ի՛նչ. Սթէյլին, Ի՛նչ. Սըմիթ. — Ձեռքի պատուութիւն դարձան. — «Հայք»ի պատասխաններ. — Մեծագոյն Նիւ Եորքը. — Այլևայլք. —

ԳՈՒՇԼԿՈՒԹԻՒՆ

ԵՊԵՐԵՅԻ

Թէ՛ Ե՛րբ պիտի կործանի Թուրքիա և Թէ՛ Ի՛նչ լուծում պիտի տրուի Բալկանի խնդրոյն.

Ե

Ապագայ գէպքերը կանխաւ գիտնալու սաստիկ փափաք ունի մարդս. Բարբարոս մարդկութիւնը ունէր այդ փափաքը, և քաղաքակրթութեան ալ ունի տակաւին: Բովանդակ հեթանոսութիւնը, ի միջիայլոց յայն աշխարհը, կը հաւատար թէ՛ կային գերբնական միջոցներ պոյլէ կարող էին օժտեալ կամ ներշնչեալ անձնաւորութիւնք գուշակել ապագայն: Մեծն Աղեքսանդր, Արիստոտէլի աշակերտ, Դեդիլիս քուրմէն ապագամ կը խնդրէր

և անգամ մը բռնի ստուցաւ զայն՝ պատգամախօսութեան ոչ պաշտօնական ժաման: Գուշակութեան ալնուագոյն տեսակն էր աստուածներէն ուղղակի քրմաց եղած հաղորդութիւնը: Բայց մարդկային մեղեակները խորհրդակցութեան կողմէն կարող վհուկներ ալ կային, ինչպէս և աստեղագէտներ որք լուսաւորաց շարժումներէն, և հաւանայներ որք թռչնոց շարժումներէն ու ձայներէն կըրնային գուշակել ապագայն. այսինքն կանխաւ իմացնել թէ՛ թագաւորը պիտի յաղթէ՞ կամ պիտի յաղթուի, թէ՛ գողցուած իրը որովք քով է կամ ո՞ւր պիտի ուսած է, են. ևն.:

Գուշակողներն մերթ անհատի մը, մերթ ազգի մը և մերթ ալ ամբողջ երկրագնդին մօտաւոր ապագայն կը ծանուցանեն: Քրիստոնեայ աշխարհը, Ս. Գրքին այսինչ մարգարէութեան վրայ տրուած մեկնութիւններէ նախապաշարուած, հաստատ կը հաւատար թէ՛ Քրիստոնէական հաղար թուականին լրանալուն՝ աշխարհիս վերջ պիտի լինէր. և թագաւորներէն ոմանք թողլով յայնժամ իրենց թագն ու արքունիք, մեկուսացան վանքերը երկրաշարժութեամբ պատրաստուելու:

Այսօր իսկ ամեն աշխարհի մէջ կան մահմետական և նոյն իսկ քրիստոնեայ հաւատացողներ գուշակութեան: Ողբան աւելի քիչ լուսաւորեալ է երկիր մը, որքան աւելի տկար է գիտական հասկացողութիւնը ժողովրդի մը մէջ, այնքան աւելի կայ գուշակութեանց հաւատացող: Արդի քաղաքակրթութեան մեծագոյն կեդրոններուն մէջ իսկ, ի Բարիդ, ի Լոնտոն, ի Նիւ Եորք, կան դաս մը մաքդիկ

որք կը հաւատան գուշակութեան և ուսմանք անկեղծ ու ուսմանք թերահաւատ հետաքրքրութեամբ կը դիմեն գուշակներու :

Ժամանակաւ խելօք Հայուն մէկը բոլոր հնարաւոր ապագաները 39 ի, այսինքն հայ այրուբենի թիւին է վերածեր, և «Վիճակի» գիրքը մինչև հիմա Հայաստանի մէջ կը գործածուի տարւոյն այսինչ օրը ի վայրկենական մխիթարութիւն կամ սրտմութիւն պարզամտաց :

Բ

Ինչպէս ալքիմիային յաջորդեց տարրաբանութիւնը, և ինչպէս աստեղագրանութիւնը տեղի առաւ աստեղաբաշխութեան, այնպէս ալ բնագանգական մարգարէութեան և դիւթական գուշակութեան տեղ կուգայ գիտական կանխասացութիւնն ու իմաստասիրական նախագուշակութիւնը :

Աստեղաբաշխն անկարող է երկինքը դիտելով անհատի մը բաղդը ծանուցանելու, բայց կրնայ խաւարում մը կանխասացել տարի մը, հազար տարի, հարիւր հազար տարի յառաջագոյն և այնպիսի՝ թուարանական ճշգրտութեամբ որ երեւոյթը ոչ մէկ վայրկեանով կանխէ կամ յապաղէ նորա գուշակութենէն :

Իմաստասիրական կանխասացութիւնը չունի և ոչ երբէք պիտի կրնայ ունենալ գիտականին մանրերկրորդական ճշգրտութիւնը, և ոչ ալ հարկ է որ ունենայ, բայց այնքան աւելի ճշմարիտ, որով և պատուական՝ պիտի լինի այն որքան մարդկային գիտութիւնը կատարելագործուի անցեալ պատմական դէպքերու և զայնս կառավարող օրէնքներուն վերաբերութեամբ : Վասն զի կան պատմական օրէնքներ ինչպէս կան տարրաբանական և բնախօսական օրէնքներ : Ազգաց պատմութիւնը անկապ պատահարներու դիպուածական շարք մը չէ, այլ կարգի մը կը հպատակի, օրէնքներով կը կառավարուի : Երբ այդ օրէնքներն քաջ ըմբռնէ մարդկային միտքը, այն ատեն կարող կը լինի ապագայն գուշակել ճշգրտութեամբ կերպով :

Տգիտութեան դարերէն մեր դարուն տարբերութիւնը այս է որ անոնք ապագայն գիտնալու փափաքով կը տոչորէին,

մենք անցեալ եղելով թիւններն գիտնալու հետամուտ ենք : Գիտուններն ամբողջ կեանքեր կը նուիրեն ուսումնասիրելու այն պէսպէս փուլերը որոնցմէ անցած է երկրագունդու միլիօնաւոր տարիներէ ի վեր, և անանական այն անթիւ տեսակները որք ապրած ու մարած են յանցելումն, հետաքննելու մարդկային ազգերը որք նոյնպէս աներեւոյթ եղած են, կարգալու անոնց պնդութեան չհամարուած արձանագրութիւններն, ուսանելու անոնց մեռած լեզուները, գերեզմանէն հանելու մեռած քաղաքներն, ի մի բան՝ զանցեալն ճանաչելու :

Եւ զանցեալն ճանաչելով է որ չափով մը կը զօրենք գոհացում տալ գալիքը նախագուշակելու մեր բնական փափաքին :

Գ

Եթէ երբէք օրինաւոր է ապագայն նախագուշակելու փափաքը, կրնանք ասել թէ այն երբէք աւելի օրինաւոր եղած չէ քան այն ջերմ փափաքը զոր Հայք կը զգան Թուրքիոյ մօտաւոր ապագայն գիտնալու մասին :

Հայկական կոտորածներէն շատ առաջ մարդիկ սկսած են Թուրքիոյ անկումը կանխասացել : Կարծեմք հնագոյն կանխասացը՝ այս մասին՝ եղած է Պագոն իմաստասէրը : Ուրեմն խորհող մտքերը Օսմանցւոց տկարութեան և անկման վրայ երեք դարէ ի վեր գուշակութիւններ կ'անեն : Այդ գուշակութիւններն աւելի ընթացիկ եղած են այս դարուս մէջ : «Հիւանդ Մարդը» բացատրութիւնը ինքնին անոր մահուան գուշակութիւն մ'է :

Բայց վերջերս, Յունաստանի վրայ տարած յաղթութենէն ի վեր, Թուրքիա աւելի կենսունակ և առողջ նկատուիլ սկսած է, և ոչ այնքան մահամերձ հիւանդ որքան կը կարծուէր : Ըստ մեզ pronosticը եղանակաւորելու բնաւ պատճառ չկայ և հիւանդը դարձեալ հիւանդ է ծանրապէս : Միայն թէ երկու հէտերու վրայ անզգուշութիւններ եղած են, ուստի և սխալ հաշիւներ յառաջ եկած :

Առաջին անգուշակութիւնը յայնմ է որ մարդս, նոյն իսկ գիտուն մարդը, չափելով քաները իւր գոյութեան վրայ, ենթակայ է ժամանակի նկատմամբ կարճ բռնելու իւր հաշիւները : Սակայն բնութեան ընթացքը աւելի երկար է, բնական

և ընկերային արտադրությունները (evolution) չափ յամբ կերպով կը կատարուին: Մարդս բնութեան առջև մանուկի մը պէս է, և մանուկի մը պէս տնտեսմանը և կարճամիտ: Կամ թէ ասեմք վարդի մը նման է, Ֆոնդընէլի բացատրութեամբ, որ կ'ասէ թէ «Վարդին յիշողութեանը նայելով երբեք պարտիզպան մը մեռած չէ»: (De memoire de rose, on n'a vu peri: un jardinier.) Ոչ ապաքէն անցեալին վրայ ալ նոյն կարճ տեսութիւններն ունէինք մինչև քիչ ժամանակ առաջ, և կը հաւատայինք թէ մարդկութիւնը երկրի վրայ վեց հազար տարիէ ի վեր գոյութիւն ունէր, ու հիմա ութ և ինը հազար տարի առաջուտ ստոյգ յիշատակարաններ կը գտնուին սակայն:

Անգամայն իտալներորդ դարէն տեսնելով ծառայից և ռաբկութեան սպառնալից ձկնորսներն դէպ հաւասարութիւն, չափ վախճան եկեղեցական և ազնուական դասերն, և Ատալպէրոն եպիսկոպոսն մօտալուտ յեղափոխութիւն մը ցաօք սըրտի կը նախազգար: «Բարբերը կը փոխուին, կ'աղաղակէր, ընկերային կարգը խախտած է»: Բայց այդ մօտալուտ կարծուած յեղափոխութիւնը, որով ծառայք և տեսք պիտի բերուէին ի հաւասարութիւն, եօթը հարիւր տարի սպասցնել տուաւ ինքզինք:

Կայ ուրիշ նկատողութիւն մ'ալ: Արտաքին և պատահական պարագայք կրնան տկարացած պետութեան մը կազմալուծումը ուղացնել կամ փութացնել: Մեր Ռուսիան թագաւորութիւնը դեռ երկտասարդական կենսունակութիւն ունէր երբ արտաքին թշնամեաց բազմակրկնակ յարձակումներէն տկարանալով ինկաւ: Թուրքիա, ընդհակառակն, իւր տկարութեան այս դարուն մէջ, հանդիպած է արտաքին նպաստաւոր պարագաներու: Հզօրագոյն տէրութիւններ իւր վրայ արշաւելով գինքը փարատելու փոխանակ՝ միաբաներ են «Խրիմի» պատերազմը մղելու, — Անգլիա, Ֆրանսա և Սարտենիա գինականքեր են Թուրքիոյ հետ՝ ընդդէմ Ռուսիոյ: Եւ դեռ վերջին տարիներս, հայկական կոտորածոց առթիւ ալ, 1854 ի քաղաքականութիւնը շարունակեցին Գերմանիա, Ֆրանսա, Անգլիա, Աւստրիա, իրենց հեզնական կամակից ունենալով

զմուսիս: Դժբաճիք քաղաքականութիւն, որ Թուրքիոյ գոյութիւնը միջազգային հաւասարակշռութեան պահպանմանը հարկաւոր կը համարի, այսինքն, տէրութիւնք կը վախեն թէ Թուրքիոյ կործանմամբ իրենցմէ մին չափազանց կ'օգտուի և սպառնալից վտրութիւն կը ստանայ: Միջազգային նախանձը Թուրքիոյ նեցուկ եղած է և է տակաւին, բայց նեցուկ բարոյապէս դատապարտեալ և դատապարտելի, նեցուկ պատահական և առժամեայ: (Շարունակելի)

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԱՆ

ՀԱՅՔ

Համդէսը պիտի հրատարակուի 1898

թուականին ևս, քաղաքական, զրական և արողջաբանական պարունակութեամբ, տասնևհինգ օրը անգամ մը:

Տարեկան քտանորդագինն է երկու տուար (տասը ծրամք կամ 4 ռուբլի) ամեն երկրաց համար:

Հանգէն է

EDITOR OF HAIK

341 West 23rd. St., New York.

Ի դիւրութիւն մեր յարգոյ բաժանորդաց, այս անգամ ՀԱՅՔի ներփակած կը յղենք բաժանորդագրութեան տոմսեր, ինքրեւով որ իւրաքանչիւր բաժանորդ հաճի տոմսին վրայ գրել իւր անունը և հասցէն, չափ որոշ կերպով, և գնոյն հետ յղէ մեզի: Եթէ ամերիկական տուար թղթագրամ ներփակէ նամակին, պէտք է տպահովագրէ զայն որպէս զի նամակը չբացուի և դրամը չգողցուի, ինչպէս երբեմն կը պատահի: Իսկ եթէ money order յղէ, ապահովագրելու հարկ չի մնար:

Բարիքի մեր յարգոյ բաժանորդներն կրնան, ի դիւրութիւն իրենց, ՀԱՅՔի բաժանորդագրները յանձնել Մեծ. Տիար Յ. Իսկէնտէրի, որ Թերթիս ձանձրոյթները սիրայօժար կրած է եօթը տարիէ ի վեր:

ՆԱՄՈՒԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Հայքի յատուկ թղթակցեթ)

Կ Պոլիս 30 Հուլ. 97

Երկրի վիճակն երթալով կը դառնանայ. նիւթական տագնապն կը սաստկանայ. գիտէք արդէն թէ Թուրքերն երբէք կանոնաւորապէս վճարած չեն իրենց պաշտօնէից. տասնեակ տարիներ առաջ՝ տարին 9 ամսական կը վճարէին, քանի մը տարի առաջ այդ 9 ամսական 7 ի իջաւ, այժմ 6 թուական կ'առնուն երբեմն պաշտօնէութեանց մէջ, այլոց մէջ միայն 5 և 4: Աւելորդ է րոնել թէ պաշտօնեայք կ'ապրին իրենց դիմաց ժողովրդեան վճարել տալով իրենց պէտքերն: Ցարդ՝ օտարա-հօգատակ պաշտօնեայք կանոնաւորապէս կը վճարուէին, քանի մ'ամիսներէ ի վեր նոքա ևս դրամ չ'են ընդունիր: Տօք. Նիւքոլ՝ անգլիացի բողոքոսեան աթոռատանոցի տնօրէնն շուրջ տարիէ մ'ի վեր չ'վճարուելուն՝ պատրաստուեցաւ մեկնիլ, Սուլթանի հրամանաւ գումար մը արուեցաւ, և մեծ դժուարութեամբ ան փոստումներով մեկնումն արգիլեցին: — Յունական և կրեաական խնդրոյն լուծման մասին ինչ որ հրատարակուի մի հաւատաք, այդ խնդիրներն դեռ շատ Զուր կը վերցնեն: Բոլորէլ Շէֆերի յետադիմութեան լուրն վաղահասէ:

Թեոսալիսցիէն Եկող ճանապարհորդ մը կ'ըսէ թէ Թուրքերն իրենց գրաւած երկրներն տեղական դարձուցած են: Հաւանականորաւ յիշատակ իւրօտայ եւրոպական թերթե-րն՝ մեք քարքարոսներու անկ ըրած վայրենութիւններն պիտի հրատարակեն:

— Հակառակ թուրք կառավարութեան հեղքմանց Զանկի կողմերն ընդհարումն ար տեղի ունեցած չեն, և թուրք խուժանն ու զինուորներն անլուր վայրենութիւններ ի գործ դրած են կանանց վրայ:

— Պատրիարքարանի թրքամիւզ վարչու-թիւնն՝ տարիէ մ'ի վեր փոխան իրաց վի-ճակի վարման հոյցելու՝ պատրիարքարա-ն տնտեսկին անձուկ վիճակն պուցնելով՝ 2000 ոսկին հաւատարմ կը չ'ընդրէր գաւազա-րութեան, այս անգամ 1000 ոսկի տու-լով նոցա և պատրիարքի երախտագրութեան և մաղթանաց արժանացած է Սուլթան:

— Աւերակ դարձած հարիւրաւոր վանքե-րու և եկեղեցեաց շինութեան համար, պատրիարքարանի կողմանէ եղած թագրի-րի յաւատարմանի, Բ. Գուռն առայդ մաս-նաւոր յանձնաժողով մը կազմած է 4 մահմետական, 1 յոյն. 1 հայ կաթողիկ և 1 հայ լուսաւորչական (Յովհաննէս Թո-րոսեան) է, որք անգլոյ վրայ քննութիւն կատարելով՝ պէտք եղածն պիտի ընեն. սոքա պաշտօն ունին նաև, այս յուզմանց առթիւ անբնաւ մզկիթներն վերամոտոգելու: Այսինքն ինչպէս որ Կ. Պոլսոյ երկրաշար-ժի համար միջազգային հանգանակու-թեամբ հաւաքեալ դրամով Կ. Պոլսոյ բոլոր մզկիթներն, զէպիլներն և մէտրէսէ-ներն նորոգելին, այս առթիւ տրուած գումարով պիտի վերանորոգեն Փոքր Ասի-ոյ իսլամ հատաւտութիւններն՝ ինամ ունենալով միայն Օթրկի մի քանի աւերակ եկեղեցեաց և վանքից պատերն: Այդ յանձնաժողովը դեռ հոն է, հաւանակա-նարար գարունին պիտի կրնան ճամբոր-դել:

— Որքերու խնդիրն դեռ երեմի վրայ մնա-ցած է:

— Վերջերս՝ Վանայէն հոս հասաւ, շոգե-նաւ մը ի տեղէն անկ գաղթող Հայերով: Ոստիկանութիւնն շոգեմարտի մէջ գտնուող կիներն ու աղաքներն ընդսնծեց, այրելէ 120ն բանտարկեց, մնացեալն յետո գրկեց: Բանտարկեալք դեռ ի բանտին են: Դար-ձողներէ շատերու կիներ ու զաւակներն հոս մնացին, անոք և անտերունջ: Կան ըն-տանիքներ՝ որոց արու անդամներէ մի քանին յետո գրկուեցան, մի քանին ի քան-տին են և կիներն ու աղջիկներն փողոց-ներն կը թափառին, և պատրիարքարան բան մը չ'կրնար ընել:

— Լոնտոնի Անկլո—Հայկական Միութեան քարտուղարն Էտուառ Սթիւն Կաան օրեր առաջ աստեղաւ և 8 օրէն մեկնեցաւ: Սուլթանն իմանալով դաւադան Կաան է զայն անտալ, Սթիւն տնկնդրութիւն չ'ընդրեց: Տատեան Արթին փաշայ Սուլ-թանի հրամանաւ զայն ճաշի հրաւիրեց: Արթին տեսաւ Կաանին: Մեկնելու օրն ըրած է անձի մը թէ՝ «այլևս կը հա-ւատամ թէ շրաղիներն ինչ որ դրեցին թրքոց քարքարոսութեան մօտին ոչ թէ չափազանցութիւն է, այլ շատ քիչ է. ինչն որ այդ բարբարոս ցեղն Եւրոպայէ

չվանաւրի, քաղաքակիրթ աշխարհն չկընար հանգստանալ: Յոյժ համակրեր է Հայերուն: Աթքին ըսած է նաեւ թէ «մենք Անգղիացիքս մասամբ պատճառ եմք Հայոց Հասած դժբաղդութեանց: Անգղիական Կ. Պոլսոյ դեսպանն քաղաքագիտութեան դէմ գործեց մեծամեծ խոտումներ ընելով Հայոց պատրիարքին: Դեսպանն ամօթապարտ է»:

—Տեղւոյս դեսպանք իմօսոյ Հայոց խնդիրն ձեռք պիտի տռնեն:

—Բերայի կառավարիչն էնվէր Պէյ միշտ անհաշտ աշօք կը նայի Հայոց, յորս Գասպար Չերապ, որոյ միակ յանցանքն Մինասի եղբայրն ըլլալն է և մասնաւորաց դէմ դժուարութիւններ կը յարուցանէ: Կը լսեմք թէ՛ դեսպանատունք և մանաւանդ ռուսականն Հատ դժգոհ է էնվէր Պէյէն և իւր հրաշարում կը պահանջեն: Հաւանականաբար աւելի լարձր պաշտօնի մը պիտի մտնուի:

ՀԱՎ

ՎԻՃԱԿԱՅԻՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԱՑ

Ի. Ն. Սթէրլին, Sterling N. J.

Տեղւոյս Հայ գաղթականութիւնը 60 հոգի է, 12 տունէ բաղկացեալ, իորոր Տիարպէթիցի: 17 ը դպրոց գնացող են. 5 աղջիկ, 12 մանչ: Վեց կաթնիներ մանուկ: 12 ը տան գործով կը զբաղին, 25 հոգի ալ գործաւոր են մեծաքսի գործի մէջ:

Յ. ԳԱՅԱՑԵԱՆ.

ԻԸ. Սըմիթ, Ն. Ճ.

(Բ. գիր)

Տեղւոյս ազգայնոց թիւը 30 է ներկայիս 16 ը Արաբկերցիներ են, որոցմէ 2 ը ընտանիք կը կազմեն և երկուքին անգամոց թիւը 7 է, մնացեալը ամուրի են. 7 Բարբերոցիներէն 4 ը ընտանիք մը կը կազմեն, մնացեալը ամուրի են. Այն. Թապցիներէն 5 ը մէկ ընտանիք կը կազմեն, մէկը միայն ամուրի է. մէկ Մալթիացի և մէկ Սերաստացի ամուրի են: Այս ազգայիներն ամենքն ալ տեղւոյս մետաքսի գործարանը կը դործեն. կիներ ընականաբար իրենց տուններու գործերը կը տեսնեն: 5 դպրոց յաճախողներ կան, 3 ը օրիորդ, 2 ը տղայ: Մնացեալ ամուրիներ մաս մաս բաժնուելով կը ընակին

ամերիկացւոց տուն և ոմանք միասին:

Կը խնդրեմ հաճեցէք սոյն աւելի մանրամասն տեղեկագրոյս անկիւն մը շնորհել Հայքի մէջ:

Ս. ԿԻՐՐԵՂԵԱՆ

Ձեռն. ՊԱՏԻՏՈՒՔԻ ԴԱՐՄԱՆ

Ահաւասարի դեղագիր մը—

Menthol 1 gramme

Salol 2—

Olive oil (huile d'olive) 2—

Lanolin 50—

Այս իւղէն կը քսես ձեռքերուդ վրայ օրն երկու անգամ:

ՀԱՅՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ս. Կ.—Սըմիթ.—Քաղաքէս դուրս բաւոր նահանգաց մեր բաժանորդներու ՀԱՅՔԻԵՐԸ ՄԷՅ ԾՐԱՐՈՎ և ՄԷՅ ԱՆԴԱՄԷՆ կը ձգենք հաս թղթատունը, ուստի և եթէ մէկուն թերթը միւսինէն սչ հասնի մի և նոյն քաղաքին մէջ, պէտք է պատճառը տեղական կամ այլ պարագայից մէջ որոնել:

Յ. Խ. Սէնթրըլ Ֆուլ.—Նիւ Եորքի Օսմանեան հիւպատոսարանին կրնայ նամակ ուղղուիլ սապէս և կը հասնի.—

Consul of Turkey, New York, N. Y.

Վուսին, Մօլտըն, Ձեր հշմարիտ անունը գիտնալ կուզենք՝ ձեր նամակէն հրատարակելու համար Հայքի մէջ:

Գ. Ե., Իլուէլ.—Ըստ ձեր խնդրանաց յղեցինք ձեզ ՀԱՅՔԻ այն հին թիւերէն մէկ մէկ օրինակ ի մի ծրայ:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Տարեկան բաժանորդագիրն է 10 ֆրանք, (երկու տոլար): Հապէն է—

Redaction du HANTES,

Convent Mechitariste,

VIENNE, AUTRIHCE

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒՂ

Հանգէս կիսամսեայ

26րդ տարի

Տարեկան բաժնեգիրն է, օտար երկրաց համար 17 ֆրանք կամ 3 տոլար 40 ռէնթ: Հապէն է—

M. M. MAMOURIAN,

Smyrne, TURQUIE

Մեծագոյն Նիւ Եորքը

Մեծագոյն Նիւ Եորքը երկրագնդին ամենէն ոչխարահարաքաղաքական քաղաքն է: Անոր սահմաններուն մէջ կան 1 միլիոն 250 հազար օտարածիներ: Գերմանացւոյ թիւն է 900 հազար, ուրիշ Պէռլինէն յետոյ ամենէն մեծ գերման քաղաքն է Նիւ Եորքը: Կան 850 հազար Իռլանտացիք, որով կը լինի ամենէն մեծ Իռլանտական քաղաքը, զի Տըպլին իսկ, իռլանտացի գլխաւոր քաղաքը, դորա հազիւ կէսն ունի: Անգլիացւոյ թիւն է 170 հազար, Ռուսացը՝ 105 հազար (Հրէայ), Իտալացւոյ՝ 100 հազար և Սկովոնացւոյն՝ 50 հազար: Հայոց թիւը հաւանօրէն 1500ը կ'անցնի:

Անցեալ քաղաքային ընտրութեանց պայքարին առաջնորդք, զգալով օտարաւեզու տարրերուն ահագին կարեւորութիւնը, վարձեցին օտարադէի ճառախօսներ: Թամմանի Հօլն միայն ի ծառայութեան ունէր 3 Ֆրանսացի, 5 Հունգարացի, 4 Բոլ, 7 Իտալացի, 12 Հրէայ, 6 Պոնտիացի, մէկ Սլոնիացի և 2 Շուէտ ճառախօսներ:

1898

ԲԱԶՄԱՎԷՊ

Այս ամսաթիւը իւր 56րդ տարին կը սկսի 1898 ին և է մեր պարբերական մամուլոյ ամենէն հին անդամը: Պարունակութիւնն է գրական, բանասիրական և պատմական: Տարեկան բաժանորդագրինն է 10 Ֆրանք (երկու տալար): Հասցէն է

Redaction du Bazmavep
ST. LAZARE, VENISE, ITALIE

ՄՇԱԿ

Օրագիր

Տարեկան բաժանորդագրինն է 10 ռուբլի, Ամերիկայի համար 6 տալար: Հասցէն է —
Tiflis, Redaction du MSCHAK

Թղթադրամ պարունակող նամակներն պէտք է ապահովագրել:

Օտար երկիրներէ դրամ կրնայ յղուիլ Գոէտի Լիօնէի փոխանակագրով, կամ Մընի Օրտըրով (Money Order), կամ Ֆրանսական Դէմպոն Փոսթով:

* *

ԵՅԼԵԼԵԼԻՔ

Պատ. Հայկ Ատատուրեան Manomet/ (Մատ.) ամերիկեան երկրորդ Ժողովական եկեղեցւոյն երէց ձեռնադրուած է: Շընորհաւոր լինի մեր ազնիւ հայրենակցին պաշտօնը:

Տիար Ս. Գ. Քէպապիան կը դրէ մեզ.

«Յովհաննէս Անտոնեան որ դատ բացած էր Ատատուր Տիրատուրեանի դէմ, կորոյս դատը և գլխիկորանհետացաւ իւր ընկերօք հանդերձ: Երբէք փորձառու եղած չեմ դատի ուր այսքան երդմնագրութիւն գործուի այնքան համարձակութեամբ: Անգգամներն որ օրէնքի միջոցաւ կը փորձէին կողոպտել Հայ մի, լաւ դատ մի առին»

Խուճը մը երկատարողներու նախաձեռնութեամբ լսարան մը անդի ունեցաւ ի Նիւ Եորք, Նոյ. 20 ի երեկոյին, աստեղապետութեամբ Տեար Զարչաֆճեանի: Տ. Գ. Սվաճեան խօսեցաւ Աղատութեան վրայ և Տոքթ. Մ. Ս. Գարրիէլեան՝ ճշմարտութեան վրայ:

Ուոթըրի մէջ կը հրատարակուի «Եփրատ» անուն շաբաթաթերթ մը, և Նիւ Եորքի մէջ «Տիգրիս» անուն շաբաթաթերթ մը. բարի գալուստ մաղթելով սոցա, կը սպասենք ձորոխին, Ալիսին, Երասխին, Կուրին և Գայլին գալուն:

Նիւ Եորքի Հայոց Բարեգործական Ընկերութեան քարտուղարին հասցէն է հետեւեալը—Prof. M. A. Yeshilian, 248 W. 62nd. St.

Ուօշինկթօնի Թրքաց ղեկավանատունը հետեւեալ յայտարարեր է լրագրաց.— Հայ յուզիչներն, իրենց խռովայոյզ ծրագրոյն համեմատ, խմբեր կը կազմեն հանրային կարգը խանգարելու և առ այս իրենց կնիկներն անգամ հրացան և ուժանակ կը գործածեն: Սերասախոյ կողմը Ուսեփ և Մինաս Օղլու աւագակները ձերբակալուեցան, և Ուսեփի կինը, որ զինեալ էր, խոստացաւ ապօրէն ընթացքէ հրաժարիլ:

Ռուսիա ազդ արած է Դրան որ եթէ վերջինս յունական տուգանքի ո և իցէ մասը գործածէ ի գին նոր սպառազինութեան, Ռուսիա անմիջական վճարումը պիտի պահանջէ ռուսեթուրք պատերազմին տուգանաց անվճար մնացած մասին:

Երբ Պուլկարիոյ Ֆէրտինանտ իշխանը անցեալներ այցելեց Սուլթանին, սա շատ մը տնուշիկ խոստումներ արաւ նմա, բայց յետոյ չկատարեց. այդ պատճառաւ Պուլկարը զայրացած էն Թուրքիոյ դէմ: Հարկը հազար թուրք զօրք Պուլկարիոյ սահմանագլխին վրայ չարուած էն, քաջ գինուած: Աւպանիոյ կողմէն ալ վերջին լուրերը վրդովիչ էն:

Աւստրիական Լոյտ չոգենաւային ընկերութեան գործակատարն ի Մէրսին անպատուութեան ենթարկուած էր Թուրքերուն կողմանէ. ասոր վրայ Աւստրիա պահանջեց Դունէն պաշտօնանկ անել Ատանայի նահանգապետը և Մէրսինի փոխնահանգապետը, նաև վճարել 50 հազար ոսկիի գումարն զոր կը պարտի Դունէն աւստրիական չոգենապետի ընկերութեան՝ թուրք զօրաց փոխադրման համար, և, վերջապէս, ողջունել աւստրիական դրօշը՝ ներման արժանանալու համար: Եթէ ոչ, սպառնացաւ Աւստրիա, դեսպանս ետ կը կոչեմ և զՄէրսին կը ուժակոծեմ: Սուլթանը Աւստրիոյ այս բոլոր պահանջներուն դռնացում առաւ յանձն առաւ և գոհացումը անմիջապէս տուաւ:

Ռուսիոյ ծովային նախարարն հրամայեց որ 11 մարտանաւեր Սև Մովուն վրայ ծառայութեան համար կազմ և պատրաստ գտնուին:

Նոյ. 22 ին Տէյլի Նիւզ հեռադիր մը հրատարակեց ծանուցանող թէ Տէրուլթիւնը կը խորհին Տարտանէլի վրայ նաւային ցոյց մ'անել կամ զԿ. Պոլիս պաշտրել եթէ Սուլթանը Կրետէի համար պահանջուած ինքնօրինութիւնը չտայ և զօրքը անկէ չհանէ:

Պէռլինէն կը գրէ մեզ Տ. Յ. Շ.

Տր. Լէփսիուս արգէն վեց ամիսէ ի վեր կը հրատարակէ Der Christliche Orient (Քրիստոնեայ Արեւելքը) անուն ամսաթերթ մը, որը մինչև այժմ ունէր կրօնական գոյն. այժմ կը փափաքի տարեգլխէն սկսելով աւելի ընդարձակ շրջանի մը մասշնչել անելու համար թերթի ծրագիրն ընդարձակել, դարձնելով զայն ի գրական, տնտեսական, կրօնական ամսաթերթ:

«ՀԱՅԳԻ»

ՊԱՏՈՒԱԿԱԼ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

ՄԼԾ. Տեարք

Ա. Առաքելեան, Թրոյ, Նիւ Եփսոս.

Տաթ. Ս. Պ. Միրիէք, Ն. Ե.

Տիկին Վարդուհի Յ. Յակոբեան, Պրուքլին՝ Ն. Ե.

Բենիամին Շէքէրճեան, Մօրիսթաուն, Ն. Ճ.

Զ. Ֆիլիփսըն, Եսենիւն, Ն. Ճ.

Մ. Յ. Զրթաֆեան, Սըմիթ, Ն. Ճ.

Ն. Ճաֆէրեան, Ֆօլ Րիվըր, Մասս.

Լէոն Յ. Սէյրանեան, Լին, Մասս.

Գ. Մ. Թ. Արապեան, Մօլտըն, Մասս.

Նիկողոս Ստեփանեան, Ուօքսփոր, Իլլ.

Յովհաննէս Գըլպարեան, Շիքակոյ, Իլլ.

Յ. Նշիկեան, Ֆրէզնոյ, Քալիֆօրնիա.

Ա. Յ. Տէրոյնեց, Փրովիտէնս, Բ. Ա.

Յովսէփ Մ. Գուլումճեան, Նիւ Պրիթէյն, Բօն.

ՅԱՐՄԱՐ ԸՆԾԱՆՆԵՐ

Արեւելեան ասեղնագործ լաւ քարանքներ, Գրիմմի առթիւ նուէր տալու շատ յարուար փիանօի և սեղանի ծածկոցներ, տնկողնոյ սփռոցներ, բարձի երեսներ, պատուհանի վարագոյրներ ևն. ևն. Գինըն խիստ չափաւոր էն: Գնողք կրնան գիմել Նիւ Եփսոս Իսթ 32րդ. փողոց 202 թիւ Մ. Գալուստեանի: Եւ 220 Պըրկընլայն Էվընիւ Եսենիւն Հիլ, Գաբրիէլեան եղբարց: Ուրիշ քաղաքներէ նամակաւ եղած յանձնարարութիւնք գոհացուցիչ կերպիւ կը կատարուին:

Զ. Ֆիլիփսըն

Է. Մ. ԳԱՐԵԿԷՍԻԱՆ

Տունը կը վաճառէ օսմանեան ոսկւով փոխանակագիր Կ. Պօլսոյ վրայ: Քաղաքէն հեռու գտնուողք կարող են զրամը զրկելով փոխ-գիրք ստանալ:

Փոխ-գիրք կը տրուի մեծ թէ փոք գումարներու համար, ի տես վճարելի:

Հասցէ—

A. & M. KARAGHEUSIAN,

71 Wall Street,

New York, N. Y.

ԹԱՆԿ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հին ձեռագիրներ (manuscripts) և դրամներ կը գնենք, ինչպէս և ուրիշ պատուական հնութիւններ: Մեր վաճառատունն է ի թիւ 390 5th Ave., Նիւ Եորք:

ՏԻԳՐԱՆ ՔԵԼԷԿԵԱՆ:

JOHN C. MORRISON

Յ. Ս. ՄՕՐԻՍՆԵՐ

ԳԵՂԱՐԱՆԵՐ

Կը գտնուի ի թիւ 262 Ութերորդ Էփրէն, Մեծ Օբէրային հանգէպ 23 և 24 րդ փողոցներուն միջև:

Վստահելի դեղեր, բանաւոր գներով կը ծախենք:

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էփրէնիու Նիւ Լորք
26դ և 27դ փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

ՃԵՇՏԵՐՆԵՆ ԵՒ ՀԻՒՐՆՆՈՅ

ԼԱՆԹԷԼՄԻ

Նախաճաշ	40 սէնթ
Կէս աւուր ճաշ	40 սէնթ
Ընթրիք	75 սէնթ

Գինով մէկտեղ

Սենեակի վարձք Հօթէլին սէջ

օրը 75 սէնթ

4 Union Square (East side) bet. 16th & 17th sts.

Տիար Քէպպեան, (48 Wall St.) կը պատրաստէ Նիւ Եորք քաղաքի Հայոց վիճակագիրը և կը խնդրէ որ իւրաքանչիւր գաւառէ եկած Հայերու ցուցակը նոյն գաւառացիներու կողմէն պատրաստուելով իրեն յղուի դիւրութեան համար: Տիարպէքիբի, Խարբերդի և Սեթստիոյ համար կարգադրութիւն եղած է արդէն:

ԳԱՐԻԻԼԵԱՆ ԵՂԱՐ

220 Bergenline Ave, Union Hill, N. J.

Եռնեւն Հ/Լ, ՆՈՒ ՃԵՐՁԻ

Այս վաճառատան մէջ կը ծախեն անհաւատալի աժանութեամբ մահճակալ (bed—stead), կարպետ, խմորած կտաւ (oil—cloth) և (lanolium), պատկերի շրջանակ և պատկեր, աթոռ, նոտարան, սեղան և այլ տնական կահ կարասի: Նաև կը գործեն կարպետ (rag carpet):

Կը փափաքենք ունենալ rag carpet գործող փորձ ուսանանկ մը հայազգի: Դիմել վերոյիշեալ հասցէին:

Մեծտոր Անգլիկէն Լեզուի

Աշխատասիրեաց և հաւաքեց

Տիգրան Մ. Պետիկեան

Նիւ Եորք, 1897

336 երես, կը պարունակէ համառօտ քերականութիւն մը, նամականի մը, խօսակցութիւն բնականական, առեւտրական և այլն, և Հայերէնէ Անգլիկէն ու Անգլիկէնէ Հայերէն երկու բառարաններ: Եօթը հազար բառ կայ:

Դինն է 50 սէնթ կամ 2½ ֆրանք:

Դիմել առ ՀՍՑԻ խմբագիրն

341 W. 23d St., N. Y.

Արժէքը կանխիկ Հյոյուն գիրք չենք կրնար յղել:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵՐԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂԱՅԱՆ ԳԱՐԱՆՆԵՐ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ: Այդ իմաստասիրութենէ կը բխին Հորս եզրակացութիւններ ազգային իսկականի և դադարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են:

Դինն է 50 սէնթ (10 սէնթ) 31 երես: 1894

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի. Ս. Գ Ա Ր Ի Է Լ Ե Ա Ն